Ծանոթ. Մնացածի վերջին երկու տողերի ծայրերի մասերը կոտրված են, վերջին տողերը չկան։ Գծագրում անճշտություններ կան (խմբ.)։

Լուսանկ. 77

282 ԵԿԵՂԵՑՈՒ արևմտյան պատի հյուսիսային վերին մասում, արտաքուստ, երկու քարերի վրա 9 տող.



ԹԻՒՆ :ՈՂԸ: (1249)| Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԹԱԹԱՐԻՆ, Ի Տ|ԻՐՈՒԹԵ. ՄԵԾ ԽԱՂԱՂԱ-ՐԱՐ ԱԻԱ|ԳԻՆ, Ի ՊԱՐՈՆՈՒԹԵ ԳՐԻԳՈՐՈՑ|, ԵՍ ՏՐ. ՆԵՐՍԱՑՍ ԵՒ ԱԿՈ[Ո]Ր ԵՒ ՓԱԽԶԱՆ ՇԻՆԵՑԱ|Ք ԶԵԿԵՂԵՑԻՍ, ՑԻՇԱՏԱԿ Մ|ԵԶ ԵՒ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ. ՈՎ| ԱՇԽԱՏԵԱԼ Ե ԱԾ. ՈՂՈՐՄԻ:

Լուսանկ. 76

16. ԿՈՒՍԱՊԱՏ ԳՅՈՒՂ, ՀԻՆ ՄՈԽՐԱԹԱՂ ԳՅՈՒՂԱՏԵՂ ԵՎ ԻՆՆ ՄԱՍ ԱՆԱՊԱՏ

Կուսապատ գյուղում եղել է սբ. Աստվածածին անունով եկեղեցի, որի պատերի մեջ դրված են հին խաչքարեր և տապանաքարեր։ Եկեղեցին այժմ գոյություն չունի, երկու արձանագրությունն առնում ենք Բարխուդարյանցից։ Ջալալյանցը նշում է, որ շինված է եղել «Ռձվե» (1686) թ.[1]։

Հին Մոխրաթաղ գյուղատեղի, գտնվում է Կուսապատ գյուղից հյուսիս՝ մի բարձրադիր հարթության վրա, որի երկու կողմում խոր ձորեր են։ XIX դարում գյուղը տեղափոխել են ներքև՝ դաշտավայրը։ Գյուղի տների հետքերը բոլորովին հարթվել են, կանգուն և կիսավեր վիճակում մնում են Ինն մաս անապատը և Մելիք Իսրայելյանների ապարանքը։

Ինն մաս անապատը գտնվում է գյուղատեղի հարավային եզրին, ձորաբերանի մոտ. թաղակապ հասարակ շենք է։ Պատերին եղած երկու արձանագրությունը հայտնում են, որ այն շինվել է 1881 թ., իսկ սեղանը 1884 թ. (դրանք չենք վերցնում), բայց ինչպես շենքի կառուցման ձևերը, այնպես էլ շուրջը եղած տապանաքարերն ու նրանց տապանագրերն ապացուցում են, որ XIX դարում մեծ նորոգումներ են կատարվել միայն։

Մելիք Իսրայելյանների ապարանքը գտնվում է անապատից մոտ 200 մետր հեռու. պարսպափակ մի ընդարձակ տարածություն է, բազմաթիվ կանգուն և կիսավեր շենքերի մնացորդներով։ Պարսպին կից գրեթե ամբողջական վիճակում մնում են 3—4 մեծ դահլիճներ՝ թաղածածկ և սրբատաշ քարով, ներսից պատերի մեջ կան խորշեր և դարակներ՝ տնային իրերի համար։ Դրանք քաղաքացիական ճարտարապետության լավագույն նմուշներ են և արժանի հատուկ ուսումնասիրության։ Հնում այդ շենքերից երկուսի մուտքերի վրա եղել են արձանագրություններ, որոնք այժմ քանդված են, առնում ենք Բարխուդարյանցից։

[1] Ջալալեանց, I, 180։

284. ***ԽԱՉՔԱՐ**, դրված է եղել ս. Աստվածածին եկեղեցու մուտքին որպես բարավոր; վրան՝*

Թվին :ՈՂ: (1241). Ես Աւրել, որդի Ուղտիկա կանգնեցի զխաչս ինձ և ամուսին իմոյ. աղաւթեցէք:

Հրատ. Բարխուդարեանց, 216։

285. ***ՏԱՊԱՆԱՔԱՐ**, դրված է եղել ս. Աստվածածնի սեմին, վրան՝*

Թվին :ՉԺԸ: (1269). այս է հանգիստ . . . . . .

Հրատ. Բարխուդարեանց, 216։

ՀԻՆ ՄՈԽՐԱԹԱՂ ԳՅՈՒՂԱՏԵՂ

286. ***ՏԱՊԱՆԱՔԱՐ**, տափակ, խրված է հողի մեջ, գտնվում է անապատի արևմտյան մուտքի մոտ, երեսին 3 տող.*

ԱՅՍԷՏԱՊԱՆ
ՂԱՍԱՄԻՆ Թ
ՎՌՃԺԱ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ | ՂԱՍԱՄԻՆ. ԹՎ.:ՌՃԺԱ: (1662)

287. ***ՏԱՊԱՆԱՔԱՐ**, տափակ, նախորդի մոտ, երեսին 4 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳ
ԻՍՏ ԽՕՃԱՅ
ԵՎՐԻՆԹՎՌ
ՃԿԹ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԽՕՃԱՅ| ԵՎՐԻՆ.
ԹՎ.:Ռ|ՃԿԹ: (1720):

ՄԵԼԻՔ ԻՍՐԱՅԵԼՅԱՆՆԵՐԻ ԱՊԱՐԱՆՔԻ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՂԵԼ ԵՆ

288. ***ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՉՈՐՐՈՐԴ ՍԵՆՅԱԿԻ ՎՐԱ՝***

Ողորմութեամբն ամենազօրին Աստուծոյ. բազում ժամանակ է յայժ տաքնապի շինեալ զտունս, իսկ Բարերարին Աստուծոյ տուեալ ինձ կարողութիւն և զօրութիւն Սուրբ Հոգւոյն՝ հանգուցեալ Մելիք Իսրայէլի որդի ես Մէլիք Ցադամս շինեցի զգեղեցիկ կամարօք և գեղեցկանկար տունս Սարայիս բազմահանճար զարդեակն իմ Մէժլումին . . . ծ. Աստուծոյ, աստուածայնով բարեաւ վայելեսցէ հանդերձ մեօք.:ՌՄԻ: (1771):

Հրատ. Բարխուդարեանց, 218։

289. ***ՀԻՆԳԵՐՈՐԴ** սենյակի վրա՝*

Տեսէ՛ք, մեր հաւատոյ հայրն Աբրահամ, կյանք նորա է . . . ամ. նայ ոչ շինեաց տուն և տեղի և բակ . . . վրանօք շրջէր յերկրին ի խառան . . . . այլ սոյն կեանք մեր կարճացեալ թիւ :Ծ: (50), ամ համայն բոլոր երթալոց եմք մեք: միւս անգամ. եսէք ի մեր յիմարութիւնս, որ այժմուս զայս, չենք . . . ազգմա նման ամօք Աբրահամայ թվ. :Ռ . . . :

Հրատ. Բարխուդարեանց, 218։

17. ՋԱՆՅԱԹԱՂ ԳՅՈՒՂ

Ս. Գևորգ եկեղեցին քանդել են. մնում է հյուսիսային պատի մի մասը, որի ստորին մասերում ագուցված կան հին տապանաքարեր և մի կոթողանման քար, վրան խաղողի ողկույզներ, մուտքի բարավորի վրա եղել է՝

290. Թ.:ՌԾԸ: (1609). յիշատակ է Ղուկասի որդի Գրիգորի:

Հրատ. Բարխուդարեանց, 214։